Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
մարտի 1-ի N 73 -Ա
որոշման

# Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն   Ծ Ր Ա Գ Ի Ր

## «ՕՐՐԱՆ-ՎԱՆԱՁՈՐ» ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԻՔԱՎՈՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակները | Օգնել ֆինանսական դժվար կացության մեջ հայտնված ընտանիքների երեխաներին, նրանց շրջանում վերացնել մուրացկանությունը, աջակցել աղքատ ընտանիքներին |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելը |
| | Բարեգործը (բարեգործները) | Միավորված ազգերի կազմակերպության հայաստանյան գրասենյակ (ՄԱԿ), ԱՄՆ-ում «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն, Հովհաննիսյանների ընտանիք, Գրիգորյան բարեգործական հիմնադրամ (Անգլիա), Սերժ Թանկյան (ԱՄՆ) , Ակիյան ընտանիք |
| 4 | Ծրագրի կատարողը | «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն<br><br>ՀՎՀՀ՝ 02552842<br><br>Հասցե՝ Առաջին Եկմալյան 6<br><br>Երևան, Հայաստանի Հանրապետություն |

| | | |
|---|---|---|
| | | Հեռ.՝ 53-51-67 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը (վայրերը), բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, քաղ. Վանաձոր, Սոցիալական բնագավառ |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 88,901,840 դրամ: |
| 7 | Բարեգործություն ստացողը | • 6-16 տարեկան 130 երեխա, որոնք ապրում են սոցիալական ծայրահեղ դժվարություններ ունեցող, մուրացկանության շեմին գտնվող ընտանիքներում: Մի շարք երեխաներ աշխատում և մուրում են փողոցում: Երեխաների մեծ մասը միակողմանի ծնողազուրկ են, հաշմանդամ, բաժանված կամ ազատազրկված ծնողներ ունեն:<br>• 30 թոշակառուներ՝ 60 և ավելի բարձր տարիքի կանայք ու տղամարդիկ, որոնք անտուն են և մուրում են փողոցում, միայնակ են, ամուսնացած են և անժառանգ, I, II, III խմբերի հաշմանդամ են, ունեն ժառանգներ, սակայն լրացուցիչ աջակցության խիստ կարիք ունեն:<br><br>Շահառուների ընտրությունը կատարում է սոցիալական աշխատողը՝ նախապես մշակված չափանիշներով: Յուրաքանչյուր դեպք քննարկվում է Օրրանի մասնագիտական խմբում, որի մեջ մտնում են Օրրանի սոցիալական աշխատողը, մանկավարժները, հոգեբանը, բժիշկը և գործադիր տնօրենը: Շահառուների ընտրության հարցում Օրրանը համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Լոռու մարզի Վանաձորի քաղաքապետարանի սոցիալական բաժնի, սոցիալական ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման վարչության հետ: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրն սկսվել է 2009 թ. հոկտեմբերից և այն շարունակական է: Սույն ծրագիրը նախատեսված է 2019 թ. հունվարի 1-ից մինչև 2019 թ. դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար: Այն կգործի այնքան ժամանակ, որքան կազմակերպությունը հնարավորություն կունենա իրագործել իր առաքելությունը և այդ նպատակով կունենա ֆինանսական միջոցներ: |
| 9 | Միջոցառումների (ըստ փուլերի, եթե այդպիսիք հնարավոր է առանձնացնել) նկարագրությունը և ժամկետները | Օրրան ԲՀԿ-ն Վանաձորի Տիգրան Մեծ 4ա հասցեում գտնվող կենտրոնում մուրացիկ, թափառաշրջիկ և ծայրահեղ կարիքավոր ընտանիքների 130 երեխայի շաբաթը 6 օր մատուցում է տաք ճաշ և իրականացնում սոցիալական, կրթական, մշակութային, հոգեբանական և բժշկական ծառայություն: |

| | | |
|---|---|---|
| | անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Շաբաթը 6 օր Օրրանը տաք նախաճաշ է մատուցում 30 միայնակ, կարիքավոր ծերերի և հաշմանդամների:<br>• 130 երեխայի և 30 թոշակառուի՝ ամենօրյա սնունդ, նաև՝ խոհանոցային սարքավորումներ և պարագաներ, տարեկան կազմում է 40681732 դրամ (մթերքի ձեռքբերում՝ 34598400 դրամ, խոհանոցային սարքավորումներ և պարագաներ՝ 2,000,000 դրամ, վարձատրություն խոհանոցի աշխատողներին (համաձայն քաղաքացիա-իրավական պայմանագրերի) 4,083,332 դրամ),<br>• բժշկական և հոգեբանական ծառայություններ՝ տարեկան 1,216,663 դրամ (բժշկական- սանիտարական առաջին անհրաժեշտության պարագաներ ձեռքբերում ՝ 300,000 դրամ, բուժքրոջ վարձատրություն (համաձայն քաղաքացիաիրավական պայմանագրերի ՝ 916,663 դրամ),<br>• սոցիալական ծառայություն, հագուստ և կոշիկ՝տարեկան 4,450,000 դրամ (ձմեռային կոշիկի և հագուստի ձեռքբերում ՝ 3,250,000 դրամ, սոցաշխատողի վարձատրություն (համաձայն քաղաքացիաիրավական պայմանագրերի ՝ 1,200,000 դրամ),<br>• մշակութային միջոցառումներ՝ տարեկան 3,116,662 դրամ (մշակութային աշխատողների վարձատրություն (համաձայն քաղաքացիաիրավական պայմանագրերի՝ 1,116,662 դրամ, մշակութային միջոցառումներ՝ թատրոն, կինո,պիկնկ՝ 2,000,000 դրամ ),<br>• դպրոցահասակ երեխաների տնային պարապմունքների կազմակերպում դպրոցից հետո. շաբաթական 6 օր 130 երեխայի համար, գրենական պիտույքների, ուսումնական նյութերի, պայուսակների ապահովում, տարեկան՝ 8,124,683 դրամ (գրենական պիտույքների, ուսումնական նյութերի, պայուսակների ձեռքբերում՝ 1,200,000 դրամ, վարձատրություն ուսուցիչներն (համաձայն քաղաքացիաիրավական պայմանագրերի՝ 6,924,683 դրամ), ձեռարվեստի խմբակներ՝ մաքրամե, փայտամշակում, կավագործություն՝ տարեկան 3,716,660 դրամ (նյութեր՝ ձեռարվեստական կենտրոնի համար՝ 800,000 դրամ, վարձատրություն ուսուցիչներին (համաձայն քաղաքացիաիրավական պայմանագրերի՝ 2,916,660 դրամ ),<br>• արտասահմանից բեռների ներմուծում (բարերարների ցանկությամբ ուղարկված նվերներ, գրենական պիտույքներ, խաղալիք), տարեկան՝ 1,000,000 դրամ,<br>• նվիրատվություն.<br>- ծայրաստիճան կարիքավոր 11 ընտանիքների էլեկտրաէներգիայի , գազի, բնակարանի վարձի վճարում համար, տարեկան ՝ 6,300,000 դրամ , |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | - 130 երեխաների և 30 թոշակառուի ամենօրյա երթևեկության ծախսեր, տարեկան՝<br>6,240,000 դրամ:<br>Ընդամենը՝ 74,846,400 դրամ:<br>Կազմակերպչական ծախսերը՝ 14,055,440 դրամ, ընդամենը ծրագրի բյուջեն՝ 88,901,840 դրամ: | | | |
| 10 | 6 | N | Ամսաթիվը | Պայմանագրի կամ հաշիվ ապրանքագրի համարը | Կազմակերպու-թյան կամ մատակարարի անվանումը | Նկարագրությունը | դրամ<br>տարեկան<br>առանց ԱԱՀ-ի |
| | | 1 | 06.02.13 | 117345015 | « Վեոն Արմենիա» ՀՁ ՓԲԸ | Հեռախոսային, ինտերնետային կապի<br>մատակարարում | 600,000 |
| | | 2 | 01.04.2014 | 03108134796 | «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ | Գազի մատակարարում | 3,200,000 |
| | | 3 | 22.08.17 | 218150806 | «Վեոլիա Ջուր »<br>ՓԲԸ | Խմելու ջրի մատակարարում | 200,000 |
| | | 4 | 17.01.2012 | Պայմանագիր N 000502, | « Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ «Դեբեդ» մ/ճ (Վանաձոր էլ.ցանց) | Էլեկտրաէներգիայի<br>մատակարարում | 1,700,000 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 5 | 16.12.18 | Պայմանագիր N 4-293 | «Էյ Ի Ջի Սերվիս» ՍՊԸ | Գազի սարքավորումների տեխնիկական սպասարկման ծառայության մատուցում | 106,555 |
| | | 6 | 08.01.2018 | Պայմանագիր N V-002 | «Սպարապետ» ՍՊԸ | Մթերքի ձեռքբերում | 30,014,400 |
| | | 7 | 08.01.2018 | Պայմանագի N 1/01-18 | «Մխիթար Սիմոնյան» ԱՁ | Հացի ձեռքբերում | 2,184,000 |
| | | 8 | 18.10.2018 | Պայմանագիր N V-002 | «Միքայել Բարաթյան» ԱՁ | Միս և մսամթերք | 2400000 |
| | | 9 | | | | Բենզինի ձեռքբերում | 200,000 |
| | | 10 | | | | Գրենական պիտույքների,<br><br>դպրոցական պայուսակների ձեռքբերում | 1,200,000 |
| | | 11 | | | | Ձմեռային կոշիկների, հագուստի ձեռքբերում | 3,250,000 |
| | | 12 | | | | Ձեռարվեստական կենտրոնների համար նյութերի ձեռքբերում | 800,000 |
| | | 13 | | | | Գրասենյակային ծախսեր | 435,000 |
| | | 14 | | | | Արտասահմանից բեռների ներմուծում (բարերարների կողմից ուղարկվող նվերներ) | 1,000,000 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 15 | 09.11.2018 | Պայմանագիր N 2823-22 | «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ | Գազի կաթսայի տեխնիկական զննման ծառայության մատուցում | 68,184 |
| | | 16 | | | | խոհանոցային սարքավորումների<br><br>ձեռքբերում | 800,000 |
| | | 17 | | | | խոհանոցային պարագաների<br><br>ձեռքբերում | 1,200,000 |
| | | 18 | | | | բժշկական-սանիտարական առաջին անհրաժեշտության պարագաների ձեռքբերում | 300,000 |
| | | 19 | | | | մշակութային պարագաների ձեռքբերում, թատրոն, կինո, պիկնիկ | 2,000,000 |
| | | | | | | Ընդամենը | 51658139 |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | | Կենցաղային ծախսեր՝ պայմանագրեր «Վեոն Արմենիա»-ի, «Հայաստանի էլեկտրական ցանցեր»-ի, «Վիոլիա Ջուր» ՓԲԸ-ի, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի հետ:<br>• ջուր՝ 200,000 դրամ,<br>• էլեկտրաէներգիա՝ 1,700,000 դրամ,<br>• հեռախոս, ինտերնետ՝ 600,000 դրամ , | | | | |

| | | |
|---|---|---|
| | | • գազ՝ 3,200,000 դրամ,<br>• գրասենյակային ծախսեր՝ 435,000 դրամ,<br>• բենզին՝ 200,000 դրամ,<br>• գազի սարքավորումների տեխնիկական սպասարկում՝ 106,555 դրամ,<br>• գազի կաթսայի տեխնիկական զննում՝ 68,184 դրամ,<br>• աշխատավարձ վարչական աշխատողներին (ադմինիստրատոր, ֆոնդերի հայթայթող)՝ 7,545,701 դրամ :<br>Ընդամենը 14,055,440 դրամ |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների այլ կազմակերպությունների հետ | 1.ՀՀ բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողով<br>2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>3. ՀՀ առողջապահության նախարարություն<br>4. ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>5. Լոռու մարզի Վանաձորի քաղաքապետարանի սոցիալական վարչություններ<br>6. Տեղական ու միջազգային ՀԿ-ներ, որոնք աշխատում են ռիսկի խմբի երեխաների հետ<br>7. ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման վարչության հետ<br>«Օրրանը» համագործակցում է նաև սոցիալական ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների, ԶԼՄ-ների հետ: |

| | | |
|---|---|---|
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | • ՀՀ կառավարություն 2003 թ.հունվարի 16 N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում լիազորված մարմնին:<br>• ամսական և եռամսյակային աշխատանքային ու ֆինանսական հաշվետվություններ են ներկայացվում «Օրրան» ԲՀԿ-ի տնօրենների խորհրդին,<br>• գույքագրումը և բաշխումն իրականացվում են «Օրրան» ԲՀԿ –ի գործադիր տնօրենի, հաշվապահի և սոցիալական աշխատողի, ինչպես նաև շահառուների ստորագրություններով ու անձնագրային տվյալներով,<br>• ամսական հաշվետվություններ կառավարության առընթեր պետական հարկային ծառայություններին,<br>• ֆինանսական աուդիտն իրականացվում է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի կողմից: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ԱՎԻՆՅԱՆ